

Չարց 1: Ինչպես է որոշվել նշված ծառայության մատուցման սակագինը՝ 2 270 ՀՀ դրամը:

Պատասխան: 2270 ՀՀ դրամ գործող սակագնի որոշումը կայացվել է «Արցախագագ» ՓԲԸ հայտի քննարկման, ուսումնասիրության, համապատասխան հաշվարկներ և առաջարկված սակագինը նվազեցնելու արդյունքում:

Չարց 2: Ինչու է նշված սակագինը նույնը բոլոր տեսակի գազասպառման սարքավորումների համար, չէ որ նրանցից յուրաքանչյուրը պահանջում է սպասարկման առանձնահատուկ մոտեցում:

Պատասխան: Բոլոր տեսակի գազասպառման սարքավորումների համար նույնն է, քանի որ պայմանագրի հավելված N 2-ի 2-րդ կետի իմաստով ծառայության մատուցումը (և դրա արժեքը) ընդհանրական է բոլոր սարքավորումների նկատմամբ, անկախ սարքավորումների առանձնահատկություններից:

Չարց 3: Եթե գազասպառման սարքավորումներից որևէ մեկը տարվա մեջ օգտագործվում է միայն որոշակի ժամկետով (օրինակ՝ 3 ամիս), ապա արդյոք տվյալ սարքավորման տեխնիկական սպասարկման դիմաց տարեկան ևս գանձվելու է 2 270 ՀՀ դրամ կամ կիսամյակային 1 135 ՀՀ դրամ:

Պատասխան: Սարքավորումներից որևէ մեկը տարվա ընթացքում շահագործման մեջ չգտնվելու դեպքում տվյալ սարքավորման տեխնիկական սպասարկման համար վճար չի գանձվում, եթե կազմվել է ակտ՝ համաձայն Պայմանագրի 4-րդ կետի 11-րդ ենթակետի: Տվյալ չաշխատող սարքավորումը աշխատանքի դնելու (օգտագործելու) դեպքում կիրականացվի այդ սարքավորման տեխնիկական սպասարկում և պայմանագրի N2 հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ տեխնիկական յուրաքանչյուր սպասարկման համար բաժանորդը կվճարի Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճարի 50% :

Չարց 4: Արդյոք, գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայություններից օգտվելը պարտադիր է:

Պատասխան: Այո, գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայություններից օգտվելը պարտադիր է՝ ԳՍՕԿ-ի 14-րդ, 15-րդ կետերի համաձայն:

Հարց 5: Արդյոք նշված ծառայություններից օգտվելու համար կնքվող պայմանագիրը կապված է բնական գազի մատակարարման պայմանագրի կնքման հետ:

Պատասխան: Այո, այդ կապը առկա է, քանի որ գազամատակարարման պայմանագիրը մատակարարի և բաժանորդի միջև կնքված գազի մատակարարման պայմաններն են, այդ թվում՝ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման պայմանները՝ համաձայն ԳՄՕԿ-ի 1-ին կետի 12-րդ ենթակետի: